«Շիրակի ուսուցիչների միություն» ԳԿ ՀԿ

”Shirak teachers union” SEC NGO

«Գյումրու №15 հիմն. դպրոց» ՊՈԱԿ

Հետազոտական աշխատանք

Հետազոտող ուսուցչուհի՝ Կարինե Վաղինակի Մելքոնյան

Հետազոտության թեմա՝ Հայկական մշակույթը XVII-XVIII-րդ դարերում

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

Գյումրի 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3

Գլուխ 1: Մշակույթ հասկացությունը,տեսակները----------4-5

Գլուխ 1.1 Տպագրությունը և մամուլը XVII-XVIII-րդ դարերում ----------9-10

Գլուխ1.2. Գիտությունը XVII-XVIII-րդ դարերում----------11-12

Գլուխ1.3 Գեղարվեստական գրականություն XVII-XVIII-րդ դարերում ----------13

Գլուխ1.4 Արվեստը XVII-XVIII-րդ դարերում----------13

Գլուխ 2:ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ----------14-19

Գլուխ 2.1 Հայկական մշակույթը XVII-XVIII-րդ դարերում թեմայի ուսուցման մեթոդները----------20-21

Եզրակացություն----------22

Օգտագործված գրականության ցանկ----------23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս աշխատության մեջ խնդիր է դրված ներկայացնել հայոց պատմության դասավանդման ընթացքում՝ հայկական մշակույթին վերաբերվող թեմաների յուրացման առանձնահատկությունը:

Հարկ է նշել, որ հայկական մշակույթի զարգացման առանձնահատկությունները՝պատմական տարբեր ժամանակահատվածներում, պայմանավորված է եղել այն բարդ աշխարհաքաղաքական իրադրությունով , որում հայտնվել է հայ ժողովուրդը: Ուստի պատմություն առարկան դասավանդելիս՝խիստ կարևորում եմ ուսումնական պլանով հատկացված սուղ դասաժամերի ընթացքում տվյալ թեմայի ամբողջական յուրացման անհրաժեշտությունը:

Ցավալի է սակայն, աշակերտները մեծ դժվարությամբ են մտապահում հայ ականավոր մշակութային գործիչների անունները, նրանց ստեղծագործությունները : Շատ հաճախ օբյեկտիվ հանգամանքներով պայմանվորված (մասնավորապես դասաժամերի սակավությամբ) հայոց պատմություն առարկան ուսումնասիրելիս պատշաճ ուշադրություն չեն դարձնում արվեստին, որը հանգեցնում է աշակերտների ընդհանուր զարգացվածության ցածր մակարդակի: Աշակերտները չեն ընկալում հայկակական մշակույթի ականավոր ներկայացուցիչների ստեղծագործությունների իմացության անհրաժեշտությունը:

Պետք է հիշել, որ այն սերունդը, որին կրթում ենք, մեր ապագան է, այդ նպատակով դասապրոցեսը պետք է կազմակերպենք և այն անցկացնենք հաշվի առնելով բոլոր հանգամանքները:

Սակայն մինչ բուն թեմային անդրադառնալը, նախ և առաջ սահմանենք «մշակույթ» հասկացությունը, որի շուրջ ծավալելու ենք մեր ողջ հետազոտական աշխատանքը:

<u>Մշակույթը</u> հասարակության և մարդու պատմական զարգացման որոշակի մակարդակ է, որն արտահայտվում է մարդկանց գործունեության և կյանքի կազմակերպման ձևերով ու տիպերով:

<u>Հայկական մշակույթը</u> հայ ժողովրդի ստեղծած նյութական և հոգևոր արժեքների ամբողջությունն է: Այն ներառում է գիտությունը, արվեստը, արհեստը և, առհասարակ հայ մարդու կողմից ստեղծած ամեն ինչ:

Գիտությանը հայտնի են մշակույթի մի քանի մոդելներ, երկմաս մոդելներ-հոգևոր և նյութական: Քառամաս մոդել, ըստ քառամաս մոդելի մշակույթը բաժանվում է

հետևյալ բաղադրիչների՝ քենսապահովման մշակույթ, արտադրական մշակույթ, հումանիտար մշակույթ և սոցիոնորմատիվ մշակույթ: Այս բոլոր բաղադրիչները փոխկապակցված են միմիանց հետ: Բոլոր տեսակի մշակույթները ունեն երկու բնորոշում՝ զանգվածային մշակույթ (մասայական) և էլիտար մշակույթ:

XVII–XVIII դարերի հայ մշակույթի գլխավոր առանձնահատկությունն այն էր, որ մայր հայրենիքում ստեղծված քաղաքական ծանր կացության պատճառով մշակութային կյանքը հիմնականում զարգացավ օրեցօր ստվարացող հայկական գաղթավայրերում: Դրանք հիմնականում գտնվում էին Հնդկաստանում, Ռուսաստանում, Վենետիկում, Իրանում և այլուր: Ցավալի է , սակայն իրողություն, որ այժմ էլ հայկական մշակույթը կերտվում է մեր պատմական հայրենիքից հեռու՝ սփյուռքում, և պետք է դաստիարակենք այնպիսի սերունդ, ով տեր կկանգնի իր պատմական մշակույթի անցյալին ու ներկային :

Գլուխ 1: Մշակույթ հասկացությունը,տեսակները

Մշակույթը հասարակության և մարդու պատմական զարգացման որոշակի մակարդակ է, որն արտահայտվում է մարդկանց գործունեության և կյանքի կազմակերպման ձևերով ու տիպերով: Հասկացությունն օգտագործվում է որոշակի պատմական դարաշրջանների, հասարակական-տնտեսական ֆորմացիաների, կոնկրետ հասարակարգերի, ազգությունների, ազգերի, ինչպես նաև կյանքի ու գործունեության առանձնահատուկ եղանակների զարգացման մակարդակը բնութագրելու համար: Մշակույթը կենտրոնական հայեցակարգ է մարդաբանության մեջ և ներառում է այն բոլոր երևույթները, որ սոցիալական ուսուցման միջոցով փոխանցվում են մարդկային հասարակություններում:

Մշակույթն ընդգրկում է ոչ միայն մարդկանց գործունեության առարկայական արդյունքները (մեքենաներ, տեխնիկական կառույցներ, արվեստի ստեղծագործություններ, իրավունքի և բարոյականության նորմեր և այլն), այլև սուբյեկտիվ մարդկային ուժերն ու ընդունակությունները, որոնք իրականացվում են գործունեության մեջ (գիտելիքներ, ունակություններ, արտադրական և մասնագիտական հմտություններ, աշխարհայացք և այլն): Մշակույթը, արտադրության հոգևոր և նյութական տեսակներին համապատասխան, բաժանվում է **հոգևոր մշակույթի** և **նյութական մշակույթի**:



Նյութական մշակույթն ընդգրկում է ողջ նյութական գործունեությունը և դրա արդյունքները (աշխատանքի գործիքներ, կացարան, հագուստ, հաղորդակցության միջոցներ, տեխնոլոգիաներ, ճարտարապետություն, արվեստ և այլն), **հոգևոր** մշակույթը՝ գիտակցության, հոգևոր արտադրության ոլորտը (ճանաչողություն, բարոյականություն, դաստիարակություն, լուսավորություն,

հասարակական գիտակցության ձևեր), առասպելաբանություն, փիլիսոփայություն, գրականություն (բանավոր և գրավոր):

Գիտությունը կազմում է մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգություն:

Միջին դարերում **մշակույթ** հասկացությունը օգտագործվում էր մշակաբույսերի աճեցման հարցում տեխնոլոգիական զարգացվածությունը բնորոշելու համար: Այդտեղից էլ առաջացել է գյուղատնտեսություն **agriculture** բառը: Մշակույթ հասակացությունը 18-րդ դարից սկսեցին կիրառել նաև մարդկանց բնութագրելիս: Այսինքն՝ մարդկանց, ովքեր առանձնանում էին իրենց բարեկիրթ պահվածքով և կրթվածությամբ սկսեցին անվանել **«կուլտուրական» կամ քաղաքակիրթ**: Այդպես էին բնորոշում հիմնականում արիստոկրատներին, որպեսզի նրանց տարանջատեն սովորական, ըստ իրենց՝ մյուս **«անկուլուրական»** մարդկանցից, ովքեր սովորական շարքային քաղաքացիներ էին: Գերմաներեն **Kultur** բառը ևս բնութագրում է հասարակության քաղաքակրթվածության աստիճանը: Մշակույթ հասկացությունը սերտորեն կապվում էր տարբեր հասարակություններում քաղաքակրթության զարգացման մակարդակի հետ, սակայն դրանք ամենևին էլ պետք չէ նույնացնել: Մշակույթ հասկացության ժամանակակից գիտական սահմանումը զերծ է մարդկանց բաժանման արիստոկրատական կամ քաղաքակրթության զարգացման մակարդակի բնորոշումներից: Այսպես, մշակույթը սահմանվում է որպես համոզմունքների, արժեքների և արտահայտչամիջոցների ամբողջություն, որոնք ընդհանուր են որոշակի խմբի համար, ծառայում են նրանց սոցիալական փորձի կուտակմանը, ինչպես նաև վերահսկում ու կանոնակարգում են տվյալ խմբի անդամների վարքագիծը: Մշակույթի յուրացումը հասարակության կամ խմբի ներսում տեղի է ունենում ուսուցման միջոցով: Ընդհանուր առմամբ մշակույթ հասկացությունը կարելի է սահմանել նաև՝ որպես հասարակության և մարդու զարգացման որոշակի մակարդակ, որն արտահայտվում է մարդկանց գործունեության և կյանքի կազմակերպման ձևերով և տիպերով: Մշակույթը ընդգրկում է իր մեջ անթրոպոլոգիան՝ մարդաբանությունը, որը բացատրում է մի շարք երևույթների առաջացման ու զարգացման ընթացքը, դրանց փոխանցման սոցիալական և քաղաքակրթական հետևանքները: Մշակույթը սահմանվում է նաև որպես ժամանակի ընթացքում ձեռք բերված գիտելիքների հավաքածու: Ներկայումս գոյություն ունեն մշակույթի տասնյակից ավել սահմանումներ, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է մշակութը իր յուրահատուկ կողմերով և հատկանիշներով: Ամենաընդհանրական կերպով մշակույթ է այն ամենը, ինչ ստեղծվել է մարդու կողմից պատմության զարգացման ընթացքում:

Մշակույթի տեսակներ

Կախված հասարակության մեջ սոցիալական փոխհարաբերությունների զարգացման մակարդակից, մասշտաբներից և տիպերից՝ առանձնացվում են մշակույթի մի շարք տեսակներ և ձևեր: Մշակույթի հիմնական տեսակները հետևյալն են՝

- Համամարդկային մշակույթ, որը ստեղծվել է մարդկության պատմության զարգացման և գոյության ողջ ընթացքում:
- Գերմշակույթ կամ սուպերմշակույթ, որը ստեղծվել է որոշակի հասարակությունում և փոխանցվում է սերնդեսերունդ:
- Ենթամշակույթ, որն իրենից ներկայացնում է համոզմունքների, արժեքների, վարքի նորմերի ամբողջություն, բնորոշ առանձին սոցիալական խմբերին և միավորումներին, օրինակ՝ ազգություններին, աշխատանքային և մասնագիտական խմբերին:
- Հակամշակույթ, որն իրենից ներկայացնում է առանձին խմբերի մշակույթ և գտնվում է հակազդեցության մեջ հասարակությունում գոյություն ունեցող գերմշակույթի/սուպերմշակույթի հետ:
- Շեղվող մշակույթ, որն ենթամշակույթի տարատեսակ է և բնորոշ է շեղվող վարք ունեցող մարդկանց, օրինակ՝ հանցագործ խմբավորումների մշակույթը:
- Անձնային մշակույթ, որն ենթադրում է առանձին մարդկանց կամ անհատների մշակույթը:

Պատմականորեն ձևավորվել են նաև մշակույթի բարձր՝ էլիտար և ժողովրդական՝ զանգվածային տեսակները: Էլիտար մշակույթը ներառում է առաջին հերթին մարդկության ստեղծած դասական համարվող արվեստի գործերն ու նյութական արժեքները, որոնք ստեղծվել են պրոֆեսիոնալների կողմից: Էլիտար մշակույթը ներառում է իր մեջ գրականությունը, կերպարվեստը, երաժշտությունը և այլն: Ժողովրդական կամ զանգվածային մշակույթը իր մեջ ընդգրկում է ժողովրդական ֆոլկլորը, երգերը, պարերը, միֆերը, հեքիաթները, որոնք ստեղծվել են մարդկանց առօրյա կյանքում և կենսագործունեության ընթացքում: Որպես կանոն էլիտար մշակույթը ստեղծվել և բավարարում է հասարակության քիչ թվով մարդկանց կարիքները, մինչդեռ ժողովրդականը՝ առավել մեծ թվով մարդկանց պահանջմունքներին և կարիքներին է համապատասխանում: Ժամանակակից աշխարհում զանգվածային լրատվության միջոցների զարգացման արդյունքում առաջացել է մշակույթի մեկ այլ տեսակ ևս՝ զանգվածային մշակույթը, որը ստեղծվել է համընդհանուր սպառման և մեծ թվով մարդկանց կարիքներին հոգեհունչ լինելու նպատակով:

1.1 **Հայկական մշակույթը XVII-XVIII-րդ դարերում. Կրթությունն**

Հայ ժողովրդի մշակութային առաջընթացի ու քաղաքակրթական վերելքի գրավականը եղել է կրթությունը: XVII-XVIII դարերում, չնայած ծանր իրավիճակին, Հայաստանում ոչ միայն փորձել են շարունակել նախորդ դարաշրջանների կրթական ավանդույթները, այլև օգտագործվել են նոր հնարավորություններ: Հայաստանի բուն տարածքից դուրս հայկական համայնքներում ևս աշխուժացավ կրթական գործը, որ պայմանավորված էր նաև նրանց ստվարացմամբ:

XVII դարի սկզբներին Սյունյաց աշխարհում հաստատվել էր Հարանց անապատի դպրոցը, որը դարձավ ուսումնական նշանավոր կենտրոն, և որով սկիզբ առավ Արևելյան Հայաստանի կրթական ու մշակութային առջընթացը: Ստեղծվում են նոր դպրոցներ Սևանում, Շամքորում և այլ վայրերում:

Մովսես Տաթևացին հիմնադրում է Հովհաննավանքի դպրոցը: 1635-1637թթ. այդ դպրոցը փոխադրվում է Էջմիածին, սակայն Հովհանավանքում ևս ուսուցումը չի դադարում, այնտեղ դեռևս ուսանում էին շատ ուսանողներ:

XVII դարում գիտակրթական աշխույժ գործունեություն է ծավալում Բաղեշի Ամիրդոլու վանքի դպրոցը, որտեղ հավաքվում և արտագրվում են նաև մեծարժեք շատ ձեռագրեր:

XVII դարի դպրոցական կյանքի կարևոր կենտրոն էր նաև Նոր Ջուղան: Այնտեղ Խաչատուր Կեսարացու ջանքերով հիմնվում է դպրոց, որն ավելի քան հիսուն տարի կարևոր դերակատարում է ունենում: Աշակերտներին առևտրական ասպարեզին նախապատրաստելու նպատակով դպրոցում դասավանդվում էին նաև տոմարագիտություն, թվաբանական առարկաներ, չափերի ու կշիռների մասին գիտելիքներ: Իր գոյության տարիներին դպրոցը տվել է ավելի քան 250 շրջանավարտ: Այս դպրոցի շրջանավարտներից էին Ոսկան Երևանցին, մի շարք կաթողիկոսներ և ուրիշ շատ անվանի գործիչներ: Ինչպես բոլոր դպրոցները, այս դպրոցը ևս եղել է գրչության կարևոր կենտրոն, ունեցել իր մատենադարանը:

1.2 Տպագրությունը և մամուլը XVII-XVIII-րդ դարերում .

Հայերեն գրքերի տպագրության սկզբնավորումը նոր փուլ նախանշեց և անգնահատելի դեր ունեցավ XVII-XVIII դարերի հայկական մշակույթի զարգացման բնագավառում: XVII դարի երկրորդ կեսին առավել նշանավոր էր Ամստերդամում հիմնադրված տպարանը:

Ամստերդամի հայոց տպարանը առավել լիարժեք է սկսում գործել 1664թ. այնտեղ ժամանած Ոսկան Երևանցու և Կարապետ Անդրիանցու համատեղ ջանքերի շնորհիվ: Աստվածաշնչի ամբողջական նկարազարդ ու հատուկ խնամքով իրականացված տպագրությունը հայ տպագրության խոշոր նվաճումն էր: Ամստերդամի հայկական տպարանում տպագրվում է ևս 11 անուն գիրք:

Ոսկան Երևանցին տպարանը փոխադրում է Լիվոռնո, որտեղ երեք գիրք հրատարակելուց հետո, փոխադրվում է Մարսել և այնտեղ մինչև 1680-ական թվականների վերջերը հրատարակում 16 անուն գիրք: Մարսելում Ոսկան Երևանցին 1673թ. սկսում է Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկի տպագրությունը, որը, սակայն, մնում է անավարտ:

Ամստերդամի հայոց տպարանը կարևոր դեր խաղաց հայ տպագրության պատմության մեջ: Ոսկան Երևանցին ունեցավ նաև աշակերտներ, որոնք նույն ոգով նվիրվեցին տպագրության միջոցով լուսավորության տարածման գործին:

XVII-XVIII դդ. հայկական գրահրատարակչությունը մեծ առաջադիմություն է արձանագրում Կ.Պոլսում: 1677թ. այստեղ տպարան է հիմնադրում Երեմիա Չելեպի Քեոմուրճյանը: Հայ տպագրության պատմության մեջ մեծ ավանդ ունի Աստվածատուր դպիր Կոստանդնուպոլսեցին, որն իր հիմնադրած տպարանում 1699 թվականից սկսած մոտ 50 տարի հրատարակել է ավելի քան ութսուն անուն գիրք: Այս տպարանում առաջին անգամ լույս է տեսնում Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» հռչակավոր երկը:

XVIII դարը հայ տպագրության համար դարձավ ծաղկման շրջան: Հայերեն գրքեր էին տպագրվում Կ.Պոլսում, Հռոմում, Վենետիկում, Տրիեստում, Պետերբուրգում, Նոր Նախիջևանում, Աստրախանում, Մադրասում, Կալկաթայում, Էջմիածնում, որոնք միաժամանակ վերածվել էին հայ մշակույթի նշանավոր կենտրոնների:

Հայ տպագրության մեջ վիթխարի նվաճում էր Էջմիածնում Սիմեոն Երևանցի կաթողիկոսի (1763-1780) նախաձեռնությամբ տպարանի ստեղծումը (1771): Սիմեոն Երևանցին նախաձեռնում և 1776թ. իրականացնում է նաև Էջմիածնում թղթի արտադրության գործարան կառուցելու գործը:

1512-1800թթ. հայ գրատպությունը մեծ առաջընթաց ունեցավ, լույս տեսավ հոգևոր ու աշխարհիկ բովանդակությամբ ավելի քան հազար անուն աշխատություն:

Հաջողություններ են նկատվում նաև լուսավորության մեկ այլ բնագավառում՝ ամսագրերի ու թերթերի՝ պարբերական մամուլի հրատարակության մեջ, որոնք բոլորն էլ լույս են տեսել Հայաստանից դուրս:

Հնդկաստանի աշխույժ հասարակական կյանքը առաջադրեց նաև պարբերական ունենալու անհրաժեշտություն: 1794-1796թթ. Մադրասում Հարություն Շմավոնյանի նախաձեռնությամբ և հենց իր տպարանում լույս ընծայվեց հայոց առաջին պարբերականը՝ «Ազդարարը»:

Այս շրջանի նշանավոր պարբերականներից են «Բազմավեպ» (Վենետիկ), «Շտեմարան», «Ազգասեր» (Կալկաթա), «Լրագիր» (Կ. Պոլիս), «Հայրենասեր» (Զմյուռնիա), «Կովկաս», «Արարատ» (Թիֆլիս) հանդեսները:

1.3. Գիտությունը XVII-XVIII-րդ դարերում.

Հայոց գիտության պատմության համար մեծ արժեք ունի 1695թ. Ամստերդամում Վանանդեցիների ջանքերով կազմված և տպագրված «Համատարած Աշխարհացոյց» անունով քարտեզը: Քարտեզագրության ինքնատիպ ու եզակի նմուշ է Երեմիա Չելեպի Քեոմուրճյանի կազմած Հայաստանի քարտեզը: Գիտագործնական նպատակներ են հետամտել նաև մաթեմատիկայի բնագավառի ուսումնասիրությունները: 1675թ. Մարսելում լույս է ընծայվում գերմանացի մաթեմատիկոս Ք. Կլավիուսի «Գործնական թվաբանության համառոտ շարադրանք» աշխատության հայերեն թարգմանությունը: Մաթեմատիկական գիտության զարգացման համար կարևոր ձեռնարկում էր XVII դարի սկզբներին Եվկլիդեսի **«Երկրաչափության»** հայերեն նոր թարգմանությունը:

Հայ մշակույթի զարգացման ասպարեզում մեծ է Վենետիկի Մխիթարյան միաբանության դերը: Հայ տպագրության մեջ ևս վիթխարի է Մխիթար Սեբաստացու և նրա հիմնած Մխիթարյան միաբանության հրատարակչական գործունեության նշանակությունը: XVIII դ. առաջին կեսին հրատարակվեցին Մխիթար Սեբաստացու կազմած «Դուռն քերականութեան Աշխարհաբար լեզուին Հայոց», որը կազմված էր թուրքախոս դարձած հայերին կրկին հայոց լեզուն հասու դարձնելու համար: Ապա լույս տեսան «Քերականութիւն գրաբարի լեզուի Հայկազեան սեռի», «Բառգիրք Հայկազեան լեզուի» աշխատությունները, «Համատարած Աշխարհացոյց» քարտեզը և այլ երկեր:

XVII դարի երկրորդ կեսից զարգացում ապրեց նաև հայոց պատմագրությունը: Պատմիչներից նշանավոր էր Առաքել Դավրիժեցին, որի հեղինակած «Պատմությունը» իր ժամանակաշրջանի կարևորագույն աղբյուրներից է: Նույն դարի երկրորդ կեսին են ստեղծագործել Զաքարիա Քանաքեռցին, Երեմիա Չելեպի Քեոմուրճյանը, որոնց պատմագիտական աշխատություններում լուսաբանվել են ոչ միայն բուն Հայաստանի, այլև Օսմանյան կայսրության մեջ ու Պարսկաստանում տեղի ունեցած իրադարձությունները: XVIII դարում ստեղծված կարևոր պատմագիտական երկերից են Եսայի Հասան-Ջալալյանի «Համառոտ պատմություն Աղվանից», Աբրահամ Երևանցու «Պատմություն պատերազմաց», Ստեփանոս Շահումյանի «Պատմութիւն Դավիթ-բեկին» և այլ աշխատություններ:

Հայ իրականության համար դարակազմիկ նշանակություն ունեցավ Միքայել Չամչյանի «Պատմութիւն Հայոց» եռահատոր աշխատությունը (1784-1786): Այն ոչ

միայն առաջին անգամ ամբողջական պատկերացում էր տալիս հայ ժողովրդի անցած ուղու մասին, այլև օգտագործել է մինչ այդ անհայտ շատ սկզբնաղբյուրներ: Չամչյանի աշխատությունը հայ ժողովրդի զավակներին հաղորդում էր արժանապատվություն ու ազգային ինքնագիտակցության հզոր լիցք: Միքայել Չամչյանի «Պատմութիւն հայոց»-ը մեծապես նպաստել է հայ պատմագիտական մտքի զարգացմանը:

Հետաքրքիր աշխատանքներ են կատարվում գիտության տարբեր բնագավառներում: Մխիթարյան միաբանության անդամ Ղ. Ինճիճյանը հրատարակում է պատմաաշխարհագրական մի շարք ծանրակշիռ աշխատություններ: Վիեննայում լույս է տեսնում Հ. Գաթրջյանի «Տիեզերական պատմություն» երկհատորյակը: Հրատարակվում է ռուս պատմաբան Սերգեյ Գլինկայի «Հայ ժողովրդի պատմության տեսություն» աշխատությունը: Արժեքավոր ուսումնասիրություններ են կատարվում լեզվաբանության ուղղությամբ: Վենետիկում տպագրվում է մի քանի հեղինակների շուրջ 50 տարվա համատեղ աշխատանքի արդյունքը՝ «Նոր բառգիրք Հայկազյան լեզվի» գիրքը: Երկու ստվար հատորներից բաղկացած այդ բառարանը այսօր էլ չի կորցրել իր գիտական արժեքը:

Մեծանում է հետաքրքրությունը բնական գիտությունների նկատմամբ: Նշանավոր բժիշկ-գիտնական Պետրոս Քալանթարյանը, որը լավ ծանոթ էր եվրոպական և արևելյան բժշկությանը, հրատարակում է «Բժշկարան» ուսումնասիրությունը: Դասագրքեր, հետազոտություններ են հրատարակվում թվաբանության, երկրաչափության վերաբերյալ:

1.4 Գեղարվեստական գրականություն XVII-XVIII-րդ դարերում

XVII-XVIII դարերում կարևոր նվաճումներ են արձանագրվում նաև գեղարվեստական գրականության բնագավառում: Այդ ժամանակ չափածո ստեղծագործություններով հայտնի են դառնում Պետրոս Ղափանցին, Նաղաշ Հովնաթանը, Սայաթ-Նովան և շատ ուրիշներ: Նաղաշ Հովնաթանը ոչ միայն բանաստեղծ էր, այլև նկարիչ, երաժիշտ: Նա հանդիսացավ մշակութային մեծ ժառանգություն թողած Հովնաթանյան տոհմի հիմնադիրը:

Սայաթ-Նովան սիրված բանաստեղծ ու երաժիշտ էր ոչ միայն թիֆլիսյան բնակչության լայն շրջաններում, որտեղ նա ապրում և ստեղծագործում էր երեք լեզուներով, այլև նրա սահմաններից դուրս: Նրա երգերը տոգորված էին սիրո, արդարության, ճշմարտության, ազնվության վեհ գաղափարներով: Իր երգերում նա դատապարտում էր անազնվությունը, սոցիալական անհավասարությունը և պաշտպանում մարդկային արժանապատվությունը:

1.5 Արվեստը XVII-XVIII-րդ դարերում

XVII դարի երկրորդ կեսը և XVIII դարը արդյունավետ եղան նաև արվեստի ու ճարտարապետության բնագավառում: Հայաստանում կառուցվում էին բազում եկեղեցիներ ու վերականգնվում թուրք-պարսկական պատերազմի տարիներին ավերվածները: Վերանորոգչական լուրջ աշխատանքներ ծավալվեցին Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի վանքում, որտեղ նկարազարդումները իրականացվեցին Հովնաթանյանների կողմից:

Հայ արվեստագետները ստեղծագործում էին ոչ միայն բուն Հայաստանում, այլև հայկական գաղութներում: Մինչև այսօր իրենց ճոխությամբ հիացնում են Նոր Ջուղայի հայոց պալատների ու բնակարանների որմնանկարները: Նոր Ջուղայից հայկական պատվիրակության կազմում ժամանելով Մոսկվա, այնտեղ իր ստեղծագործական ուղին շարունակեց նշանավոր նկարիչ Բոգդան Սալթանովը: Արվեստի նշանավոր կոթող էր հայ արհեստավորների պատրաստած «Ալմաստե գահը», որը Նոր Ջուղայի հայկական պատվիրակությունը նվիրաբերեց Ռուսաստանի Ալեքսեյ ցարին: Այն այժմ պահվում է Մոսկվայի Զինապալատում:

Գլուխ 2:ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

Մխիթարյան Միաբանությունը հայ կրոնական և մշակութային կամակերպություն է, որը հիմնադրվել է 1701թ. սեպտեմբերի 8-ին Կոստանդնուպոլիսում՝ վանահայր Մխիթար Սեբաստացու կողմից: Մինչև Մխիթարյան միաբանության հիմնադրումը Մխիթար Սեբաստացին դպրոցներ է բացել տարբեր հայաբնակ քաղաքներում: Աշխարհի տարբեր մասերում 1736 թ.-ից մինչ մեր օրերը գործել է շուրջ 30 Մխիթարյան վարժարան: Ներկայումս գործում են Մխիթարյանների Բուենոս Այրեսի, Հալեպի, Բեյրութի, Ստամբուլի, Փարիզի և Լոս Անջելեսի վարժարանները: Մխիթարյանները ոչ միայն վանական դպրոցներ են բացել Սուրբ Ղազար կղզու և Վիեննայի վանքում, որտեղ հիմնականում պատրաստել են հոգևորականներ, այլև այն բոլոր քաղաքներում, որտեղ մեծ թվով հայեր են բնակվել: Մեծ է Մխիթարյանների դերը հայ մատենագրության նմուշների հավաքման և հրատարակման գործում: Օրինակ Վիեննայի և Վենետիկի Մխիթարյանների վանքում պահվում են շուրջ 4000 ձեռագրեր, ինչպես նաև տասնյակ հազարավոր հնագույն տպագրություններից մինչև մեր օրերում լույս տեսած հայերեն գրքեր: Հրատարակել են հին մատենագրության գրեթե բոլոր հայտնի դեմքերի երկերը: Դրանցից են՝ Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը, Մովսես Խորենացին, Կորյունը, Եզնիկ Կողբացին, Եղիշեն, Ղազար Փարպեցին, Հովհան Մանդակունին, Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին և այլոք: Մխիթարյանները թարգմանել են նաև հունա-հռոմեական դասական գրականության և արևմտաեվրոպական գրականության լավագույն նմուշները: Վենետիկի և Վիեննայի Մխիթարյանները տպագրել են Հոմերոսի «Իլիականն» ու «Ոդիսականը», Պլատարքոսի «Զուգակշիռների» վեց հատորները, Քսենոփոնի «Կյուրոսի Խրատը», Կիկերոնի, Սենեկայի, Մարկոս Ավրիլիոսի, Վիրգիլիոսի երկերը,Սոֆոկլեսի ողբերգությունները, Եզովպոսի Առակները, Դանթեի «Աստվածային կատակերգությունը», Միլտոնի «Դրախտ կորուսյալը», Բայրոնի «Մանֆրեդը», Ռասինի, Կոռնելի ողբերգությունները և այլն:
Մխիթարյան Միաբանությունը հրատարակել են տետրակներ, տարեգրքեր, պարբերականներ, ամսագրեր և շաբաթաթերթեր: Դրանցից են «Եղանակ Բյուզանդյան» տարեգիրքը, «Դիտակ Բյուզանդյան» պարբերականը, «Դարապատում» ժողովածուները, «Բազմավեպ» ամսագիրը և այլն:

Մխիթարյաններ, հայ կաթոլիկական վանական և մշակութային հաստատություն: Հիմնադրել է Մխիթար Սեբաստացին 1701 թ. սեպտեմբերի 8-ին, Կ. Պոլսում՝ հոգևոր, ուսումնակրթական, գիտական և մշակութային գործունեություն ծավալելու

նպատակով: Միաբանությունը դրվել է Տիրամոր մասնավոր պաշտպանության ներքո՝ «Որդեգիր Կուսի-Վարդապետ Ապաշխարության» նշանաբանով, որի սկզբնատառերն այսօր էլ գրված են Մխիթարյան միաբանության զինանշանի վրա: 1706 թվականին միաբանությունը տեղափոխվել է վենետիկապատկան Մորեա թերակղզում (Հունաստան) գտնվող Մեթոն բերդավան: 1717 թվականից հաստատվել է Վենետիկի Ս. Ղազար կղզում: 1712 թ. Վատիկանը Մխիթար Սեբաստացուն ճանաչել է միաբանության առաջնորդ, նրան շնորհել աբբահոր կոչում: XIX դ. սկզբին, երբ Ֆրանսիան վերացրել էր իր տիրապետության ներքո գտնվող բոլոր կրոնական միաբանությունները, Ֆրանսիայի կայսր Նապոլեոն I Բոնապարտը 1810 թվականի օգոստոսի 17-ի հրովարտակով Ս. Ղազարի հայկական միաբանությունը ճանաչել է գիտական հաստատություն՝ «Հայկական ակադեմիա» պատվավոր տիտղոսով: Իր ստեղծման օրվանից Մխիթարյան միաբանությունը ծավալել է հայագիտականբանասիրական և մշակութային բուռն գործունեություն: XVIII դ. 1-ին կեսին Մխիթարյան միաբանության հայագիտական գործունեության նշանակալից երևույթը Մխիթար Սեբաստացու «Բառգիրք հայկազեան լեզուի» (հ. 1, 2, 1749, 1769) բացատրական բառարանի հրատարակումն էր: Վենետիկի Մխիթարյանների տպարանը հիմնվել է 1789 թ.: Առաջին տպարանապետն է եղել Հովհ. Զոհրապը: Մխիթարյանների հրատարակչական գործունեությունը սերտորեն առնչվել է իրենց տպարանի աշխատանքի հետ: Առաջին տարում տպարանը լույս է ընծայել Գրիգոր Նարեկացու երկերը՝ «Գիրք աղօթից» («Մատեան ողբերգութեան») և «Մեկնութիւն Երգոց երգոյն Սողովմոնի», ապա՝ Մխիթար Գոշի առակները («Առակք և ոտանաւորք խրատականք», 1790), Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց»-ը (1793), Մովսես Խորենացուն վերագրվող «Գիրք պիտոյից»-ը (1796) և այլն: Տպագրվել են նաև միաբանների գործերից: 1800 թ. այդտեղ տպագրվել է Մխիթարյանների առաջին (հայոց երկրորդ) պարբերականը՝ «Տարեգրութիւն»-ը: Վենետիկի Մխիթարյանների կարևորագույն հրատարակություններից է Աստվածաշնչի երկրորդ (1805, առաջինը՝ 1733) հրատարակությունը՝ Հովհ. Զոհրապի աշխատասիրությամբ: XVIII դ. 2-րդ կեսից Մխիթարյան միաբանությունը վերելք է ապրել հայ մշակութային և գիտական առաջնակարգ գործիչներ Ս. Ագոնցի (1740–1824), Մ. Չամչյանի, Գ. Ավետիքյանի, Մ. Ավգերյանի, Հ. Ավգերյանի (1774–1854), Ղ. Ինճիճյանի (1758–1833), Մ. Ջախջախյանի (1770–1835), Ե. Թովմաճանի (1777–1848), Ա. Բագրատունու (1790–1866), Է. Հյուրմյուզյանի (1799–1876), Ղ. Ալիշանի, Գ. Զարբհանալյանի (1827–1901) և այլոց գործունեության շնորհիվ: Սկսվել է «Մատենագիրք նախնեաց» և նույնի համառոտ հանրամատչելի բնույթ կրող «Ընտիր մատենագիրք», ինչպես նաև «Սփերք հայկականք» շարքերի հրատարակությունը: Բնագրագիտական ճշգրտումներով, առաջաբանով ու

ծանոթագրություններով հրատարակվել են Գրիգոր Նարեկացու «Մատենագրութիւնք» (1827), Բարսեղ Կեսարացու «Ճառք…» (1830) Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց» (1832), Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» (1832), Դավիթ Անհաղթի «Մատենագրութիւնք» (1833), Եղիշեի «Մատենագրութիւնք» (1838), Մովսես Խորենացու «Մատենագրութիւնք» (1843, 2-րդ հրտ. 1865) և համաշխարհային ու հայ դասականների այլ գործեր: Մխիթարյանները հանդես են եկել նաև ինքնուրույն հայագիտական, պատմաբանասիրական, աշխարհագրական, բառարանագիտական, աստվածաբանական և այլ բնույթի աշխատություններով: XIX դարը բեղմնավոր էր նաև Մխիթարյան միաբանության գրական-գեղարվեստական գործունեությունը, որի հիմքը դրել էր Մխիթար Սեբաստացին իր «Տաղարան» (1727) բանաստեղծությունների ժողովածուով, որը կլասիցիզմի առաջին ամբողջական դրսևորումն է հայ գեղարվեստական գրականության մեջ: Հայ կլասիցիզմը հետագա զարգացում է ստացել Ղ. Ինճիճյանի, Մ. Ջախջախյանի, Է. Հյուրմյուզյանի, Գ. Ավետիքյանի ստեղծագործություններում և թարգմանություններում («Տաղք մխիթարեան վարդապետաց», հ. 1–3, 1852–54), իսկ Ա. Բագրատունու «Հայկ Դիւցազն»- ով (1858) հասել է իր գագաթնակետին: XIX դ. 2-րդ կեսից կլասիցիզմին փոխարինել է ռոմանտիզմը, որի հիմնադիրը Ղ. Ալիշանն է: Մխիթար Սեբաստացու ջանքերով, նրա անձնական գրադարանի հիմքի վրա Ս. Ղազար կղզում հիմնադրվել է Վենետիկի մատենադարանը, որը սկզբնական շրջանում համալրվել է նվիրատվություններով, հետագայում՝ նաև գնումներով: XIX դ. կեսին կառուցվել է գրադարանի նոր շենք՝ երկու մասնագիտացված գրապահոցով, որտեղ հավաքվել են ձեռագիր մատյաններ, պարբերականներ ու տպագիր հրատարակություններ՝ հայերեն և այլ լեզուներով: Ներկայիս տպագիր ֆոնդը շուրջ 100 հզ. միավոր է (հազվագյուտ հրատարակություններ հայերեն և այլ լեզուներով), ձեռագիր ֆոնդը՝ 4 հզ.: 1772 թվականին, Ս. Մելգոնյանի (1717–99) աբբահայրության ժամանակ, երբ Մխիթարյան, միաբանությունյան անդամների միջև անհամաձայնություն և վեճ է ծագել կանոնադրության փոփոխության կապակցությամբ, միաբանների մի խումբ՝ Ա. Բաբիկյանի (1738–1825) գլխավորությամբ, թողնելով Վենետիկը, 1773 թ. հաստատվել է Տրիեստում (Ավստրիա), 1810 թվականից՝ Վիեննայում: 1811 թվականի հունիսի 8-ին ավստրիական կառավարությունը պաշտոնապես ճանաչել է նրանց գոյությունը: Մխիթարյան միաբանությունյան Վիեննայի ճյուղավորումը կարճ ժամանակում կրկնապատկել է իր անդամների թիվը: 1874 թ. միաբանության տարածքում կառուցվել է եկեղեցի: Ժամանակի ընթացքում միաբանությունում ստեղծվել է մատենադարան, որտեղ պահվում են շուրջ 2600 հայերեն ձեռագրեր, ավելի քան 120 հզ. գիրք՝ հայերեն և օտար լեզուներով, հայ պարբերական մամուլի

հարուստ հավաքածու: Միաբանությունն ունի նաև թանգարան, որի բազմաթիվ ցուցանմուշներից հատկապես հայտնի են հայկական դրամների, եկեղեցական զգեստների և սպասքի հավաքածուները: 1811–12 թթ. Վիեննայի Մխիթարյան միաբանությունը հիմնել է տպարան (գրքեր է տպագրել 50 4 լեզուներով) և ծավալել գրահրատարակչական լայն գործունեություն: Վիեննայի Մխիթարյան միաբանությունն իր ծաղկուն շրջանն է ապրել XIX դ. 2-րդ կեսից՝ նշանավոր գիտնական հայագետներ Վ. Չալըխյանի (1803–34), Մ. Գարագաշյանի (1818– 1908), Հ. Գաթըրճյանի, Ղ. Հովնանյանի (1817–97), Կ. Սիպիլյանի (1824–78), Ա. Այտընյանի (1825–1902) և այլոց գործունեության շնորհիվ, որոնք զարգացրել են հայ քննական լեզվաբանությունը, պատմագրությունը, դրամագիտությունը, ձեռագրագիտությունը և այլն: Հիմնադրման սկզբից Վիեննայի Մխիթարյանների գործունեության մեջ գերակշռել են հայագիտական-բանասիրական, լեզվաբանական-թարգմանական աշխատությունները, հրատարակվել են կրոնաաստվածաբանական բնույթի գործեր՝ «Խորհրդատետր սրբոյ պատարագին…» («Պատարագամատույց», 1803 և այլն): Հիշատակության արժանի են Պ. Հովնանյանի «Մարդկային լեզուին սկզբան» (1857), Հ. Գաթըրճյանի «Տիեզերական պատմութիւն ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցմեր ժամանակս» (հ. 1, 2, 1849, 1852), Ա. Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» (1866), Ս. Տերվիշյանի «Հնդեւրոպական նախալեզու» (1885) և այլ աշխատությունները: Ստեղծվել են գեղարվեստական երկեր, կատարվել թարգմանություններ: XIX դ. վերջից և XX դ. սկզբից Մխիթարյան միաբանության երկու ճյուղավորումները սերտորեն համագործակցում են միմյանց հետ և իրենց կարևոր նպաստը բերում հայ գիտությանն ու մշակույթին: XIX դ. վերջից իրենց գիտական, գրական, մշակութային գործունեությամբ հայտնի են Գ. Գալեմքյարյանը (1862–1917), Բ. Սարգիսյանը (1852–1921), Հ. Տաշյանը, Ա. Ղազիկյանը (1870–1932), Ս. Էփրիկյանը (1873–1952), Վ. Հացունին (1870–1944),Բ. Չրաքյանը (1877– 1970), Հ. Աստուրյանը (1880–1950), Մ. Պոտուրյանը (1881–1959), Ն. Ակինյանը, Վ. Հովհաննիսյանը (1894–1977), Հ. Ոսկյանը (1895–1968), Վ. Ինգլիզյանը (1897–1968), Մ. Ճանաշյանը (1908–74), Պ. Անանյանը (1920–98), Ս. Ճեմճեմյանը (1939– 96), Օ. Սեքուլյանը (ծ.1921), Լ. Ձեքիյանը (ծ. 1943) և ուրիշներ: Մխիթարյանները գործուն մասնակցություն են ունենում հայագիտական միջազգային գիտաժողովներին, սերտորեն համագործակցում Հայաստանի գիտնականների հետ: 1993 թվականից Հայաստանում գործում է «Հայաստանի 5 Մխիթարյան կենտրոնը», որի նպատակն է օժանդակել Հայաստանի և սփյուռքի ազգային–մշակութային և կրթական կյանքին, ավելի սերտացնել հայրենիքի և սփյուռքի գիտնականների համագործակցությունը Ս. Ղազարի ակադեմիայի հետ: Մխիթարյան միաբանությունը, Վենետիկի և Վիեննայի պատմական զույգ

ճյուղավորումներով, երկարատև բանակցություններից և քննարկումներից հետո Վենետիկի Ս. Ղազար Մայրավանքում 2000 թ. հուլիսի 10–21-ը կազմակերպել է միացյալ ընդհանուր արտակարգ ժողով, որին մասնակից երկու հաստատությունների բոլոր միաբանները որոշել են միավորվել՝ ստեղծելով Մխիթարյան միացյալ միաբանություն՝ մեկ կենտրոնական վարչությունով: Վենետիկի Ս. Ղազար Մայրավանքը Մխիթարյան միացյալ միաբանության գլխավոր կենտրոնատեղին է, Վիեննայի վանքը՝ առաջին գլխավոր մենաստանը, որը պետք է ունենա տեղական աբբահայր տիտղոսը կրող մի վանահայր: Զույգ միաբանությունների բոլոր առաքելավայրերն ու կենտրոնները կառավարվելու են նորընտիր ընդհանրական աբբահոր և իր Միացյալ վարչական խորհրդի կողմից: Մխիթարյան միաբանության գործունեության կարևոր ասպարեզներից է ուսումնակրթական առաքելությունը: 1732 թ. Ս. Ղազարի վանքին կից հիմնվել է ճեմարան (ակադեմիա), որը հետագայում դարձել է ճանաչված ուսումնագիտական կենտրոն: Այստեղ հայոց լեզվին ու մշակույթին են ծանոթացել Եվրոպայի բազմաթիվ անվանի մտավորականներ՝ Բայրոնը, Բրեյնդը, Ստենդալը, Պետերմանը, Վ. Սկոտը և ուրիշներ.: Միաբանությունը 1834 թ. վարժարան է հիմնել Պադուայում (Մուրատյան), 1836 թ.՝ Վենետիկում (Ռափայելյան), որոնք 1870 թ. միավորվել են և կոչվել Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարան: Վենետիկի Մխիթարյանների տնօրինության տակ գործել է նաև Փարիզի Սամուել Մուրատ վարժարանը (1846–1988): Վիեննայի Մխիթարյանների դպրոցներից հնագույնը հիմնվել է 1774 թ., Տրիեստում: Վիեննայում գործում է Աստվածաբանական կղերանոց (ուսումնարան), որտեղ տարբեր երկրներից եկած ապագա Մխիթարյան վարդապետներ ուսումնասիրում են աստվածաբանություն, հայ ժողովրդի և եկեղեցու պատմություն, փիլիսոփայություն, հայ բանասիրություն և այլ առարկաներ: XIX դ. Մխիթարյան միաբանությունը Կ. Պոլսում ունեցել է 6 նախակրթարան: Կ. Պոլսի Ֆրանցիսկյան վանքին կից Վիեննայի Մխիթարյանները 1830 թ. հիմնել են դպրոց, որը 6 1857 թվականից տեղափոխվել է Բանկալթիի թաղամասը (հայտնի է Մխիթարյան լիցեյ անունով): Դպրոցներ են հիմնվել Հունգարիայի հայ գաղթավայրերում՝ Եղիսաբեթուպոլսում (1746, ծրագիրն ու կանոնադրությունը 1790 թ. կազմել է Մ. Չամչյանը), Վարատինում (1749), Սիբվիզում (1797), ինչպես նաև՝ Տրապիզոնում (1817), Ղարասուբազարում (1821), Ախալցխայում (1831), Սիմֆերոպոլում (1850), Քավթառլու գյուղում (1880, այժմ՝ ՀՀ Շիրակի մարզի Փանիկ գ.), Պարտիզակում (1883), Սավորայում (1885), Նիկոմեդիայում (1887), Մուշում (1892), Մերդինում (1911), Խարբերդում (1912) և հայաբնակ այլ վայրերում: Մինչև առաջին համաշխարհային պատերազմը Վիեննայի Մխիթարյաններն ունեցել են 26 դպրոց: 1918 թ. Կ. Պոլսի Շիշլի թաղամասում հիմնվել է որբանոց-դպրոց, որը 1921 թ.

տեղափոխվել է Գատը գյուղ, 1922 թ.՝ Իտալիայի Ֆիեսո գյուղ, ապա՝ Միլան: 1936 թ. նոր դպրոցներ են հիմնվել Ալեքսանդրիայում, Հալեպում (վերջինս՝ լիցեյի ծրագրով): Բեյրութի Հազմիե արվարձանում Մխիթարյաններն ունեն երկրորդական մի վարժարան, 1972 թ. բացվել է միաբանության Ռաուդայի (Լիբանանում) դպրեվանքը, 1956 թ.՝ Բուենոս Այրեսի (վենետիկյան), 1979 թ.՝ Լոս Անջելեսի (վիեննական) Մխիթարյան դպրոցները: Մխիթարյան միաբանությունը հայ գիտամշակութային կյանքում կարևոր ներդրումն է ունեցել իր պարբերական մամուլով: 1843 թվականից անընդմեջ Վենետիկի Մխիթարյանները հրատարակում են «Բազմավեպ» ամսագիրը, որը ներկայումս հրատարակվող հայ ամենահին պարբերականն է: Վիեննայի Մխիթարյանները 1847–63 թթ. հրատարակել են «Եվրոպա» շաբաթաթերթը, 1887 թվականից՝ «Հանդես ամսօրյա» ամսագիրը: Մխիթարյանների հրատարակած պարբերականներից առավել հայտնի են նաև՝ «Եղանակ բյուզանդյան» (1803–20), «Դիտակ բյուզանդյան» (1812– 16), «Հայ ընտանիք» (1969 թվականից, դպրոցական պատկերազարդ ամսագիր, 1947– 60 թթ.՝ «Մխիթարյան ընտանիք», 1960–62 թթ.՝ «Ընտանիք», 1963 թվականից՝ կրկին «Մխիթարյան ընտանիք») հանդեսները և այլն:

2.1 Հայկական մշակույթը XVII-XVIII-րդ դարերում թեմայի ուսուցման մեթոդները :

<<Աշխարհը բարելավելու համար հարկավոր է
շրջվել դեպի դրական կրթական մեթոդներ: Այն պահից
երբ բացահայտվեն առավել արդյունավետ մեթոդները,
կրթությունը կդառնա գրեթե միակ համապատասխան
բնագավառը, որը կարող է բարելավել կյանքը:>>

Բ.Ֆ.ՍՔԻՆԵՐ

Պատմության դասավանդման ընթացքում մեթոդական ինչպիսի միջոցներ էլ կիրառվի կարևոր է ուսուցչի բանավոր խոսքը շեշտադրությունը , ներկայացման ձևը; Պատմության դասաժամերի ընթացքում պետք է աշակերտի մոտ ձևավորվի հայրենասիրություն, ազգային դաստիարակություն, պատմության համամարդկային հարցերի վերաբերյալ պատկերացումներ, հիմնախնդիրների վերաբերյալ վերհանում և վերլուծություն: Հայոց պատմությունն առարկան տալիս է հայեցի մտածելու կարողություն, դաստիարակում է հայրենաիրությամբ: ՈՒսուցման ձևերն ու մեթոդները ի վերջո հանգում է երեխայի ուժերի ու հետաքրքրությունների զարգացման հարցին:/Ջոն Դյու/: Մեթոդիկայի հիմնական խնդիրը սովորեցնելն է, կոնկրետացնում է ուսուցչի աշխատանքը ըստ դասարանների և դասերի: Պատմական նյութի բովանդակությունից ելնելով՝ հաշվի առնելով սովորողների ճանաչողական կարողությունները, ուսուցիչը ընտրում է դասավանդման ձևեր ու մեթոդներ, հնարներ դասի արդյունավետությունը բարձրացնելու, գիտելիքների հաղորդման ու աշակերտների հեշտ յուրացման համար ;

Ուսուցման մեթոդները ուսուցչի և աշակերտի աշխատանքի այն ձևերն են, որոնք հնարավորություն են ընձեռնում խթանել գիտելիքների ձեռքբերումը, իմաստավորել դրանք, զարգացնել աշակերտի մոտ կարողություններ և հմտություններ, ձևավորել աշակերտների աշխարհայացքը, զարգացնելու նրանց ընդունակությունները:

ՈՒսուցման ամեն մի մեթոդ ունի իր նպատակն ու բովանդակությունը և իրականացման միջոցները: Մեթոդները բաժանվում են բանավոր և գրավոր խմբի: ՈՒսուցման մեթոդները բազմազան են՝ կախված դասավանդվող առարկայից, դասի նպատակից ու բնույթից: Լ. Վիգոտսկին գրել է<<Մեթոդը միաժամանակ նախադրյալ է և նյութ, գործիք և ուսումնասիրության արդյունք>>: Նշված թեման ուսումնասիրելի նպատակահարմար եմ գտնում օգտագործել հետևյալ ուսուցման ձևերն ու ակտիվ մեթոդներն՝

- Պատմել /դասախոսություն/,
- Բացատրություն-վերլուծություն,
- Թեստային աշխատանք,
- Աշխատանք դասագրքով և լրացուցիչ գրքով / սկզբնաղբյուր/,
- Համակարգիչով դասի անցկացում/պրեզենտացիա/ և նյութերի ցուցադրում,
- Դասի մոդելավորում կամ սխեմայի կազմում/ քարտեզագրում/,
- Գրավոր աշխատանք-համառոտագրում,
- Գործնական աշխատանք,

- Ինքնուրույն աշխատանք,
- Դերային խաղ,
- Խմբային աշխատանք,
- Դպրոցական նախագիծ,

Ցանկացած դաս-ուսուցում և մեթոդների կիրառում տալիս է սովորողներին գիտելիք: Գիտելիքների յուրացումը թույլ և ուժեղ սովորող աշակերտների մոտ կատարվում է տարբեր ձևով: Մանկավարժի խնդիրն է հաշվի առնել աշակերտների ընդունակությունները , կարողությունները: Այս տեսակետից հետաքրքիր է Բենջամին Բլումի առաջարկած ուսուցման դասակարգումը: Բլումը գտնում է, որ ուսուցման ընթացքում աշակերտը ոչ միայն ձեռք է բերում գիտելիքների հանրագումար և մտապահում, այլ նաև համեմատում է դրանք իր ունեցած գիտելիքների հետ: Նոր գիտելիքները դարձնում է կիրառական, գնում դեպի գիտելիքների խորացում ու վերլուծություն:

Ուսուցման մեթոդը մանկավարժական գործունեության մի միջոց է, հնար հիմնական գործիք, որով իրականացվում է ուսուցչի և աշակերտի համագործակցությունը՝ ուղղված ուսումնառության նախանշված արդյունքին, գիտելիքների ձեռք բերմանը, կարողությունների ու հմտությունների զարգացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն նրա անցած ուղին է՝ կենսագրությունն ու հիշողությունը, դարերի հոլովույթում նրա կերտած հոգևոր և նյութական արժեքների ամբողջությունը; Այն քաղաքացու գործունեության, հասարակության և պետության հիմքն է; Ուստի պատմություն դասավանդող ուսուցչի պատասխանատվությունը կրկնակի մեծանում է: Թեև տարաբնույթ վերապատրաստումները շատ նպաստում են ուսուցչի ինչպես գիտելիքների, այնպես էլ փորձի կատարելագործմանը, այնուամենայնիվ ուսուցման գործընթացն ընդհանրապես, և դասավանդումը , մասնավորապես , ստեղծագործական պրոցես է: Ըստ իս, այն պահանջում է ինքնատիպ ու արդյունավետ գործելաոճ , միտք, կարողությունների լայն շրջանակ, մշտապես ինքնակրթվելու պահանջ, ի վերջո, բարություն, հանդուրժողականություն , մեծ սեր երեխաների հանդեպ և մեծ պատասխանատվություն երկրի առջև:

Օգտագործված գրականության ցանկ

1.Հայ ժողովրդի պատմություն (1972 Երևանի համալսարանի հրատարակչություն)

2.Հայոց պատմություն Ուսումնական ձեռնարկ ոչ մասնագիտական ֆակուլտետների համար (ԵՊՀ հայոց պատմության ամբիոն 2000 Զանգակ 97)

3. ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ (Նվիրվում է Վենետիկի Սուրբ Ղազար կղզում Մխիթարյան միաբանության հաստատման 300-ամյա հոբելյանին ԵՐԵՎԱՆ – 2017)